Հրաշալի բարեկամը

1 ◄ «Արի» հրատարակչության տաղավարն աչքի էր ընկնում նախադպրոցական և դպրոցական երեխաների համար նախատեսված ուսուցողական տարաբնույթ սեղանի խաղերով:

- Բացառիկ տպագիր խաղ ունենք 2 տարեկան երեխաների համար՝ մատների շարժողականությունը, հիշողությունը զարգացնելու համար, իսկ «Հեքիաթ լոտոն» մեծ հետաքրքրություն առաջացրեց հատկապես 3-ից 5-րդ դասարանցիների մեջ: Այն խաղում են լոտոյի սկզբունքով, միայն թե թվերի փոխարեն ընթերցում են հեքիաթի բնագրից մի հատված: Իսկ «Ծովահենների արկածները» գիրք-խաղը աշխարհագրությամբ հետաքրքրվողների համար է, -ներկայացնում է հրատարակչության աշխատակից Հելենը:

Կարդալու և խզբզելու սիրահարներին ցուցադրական ընթերցումով ողջունում է «Ձի էս էմ ստուդիոյի» տաղավարը.

- Կարդում և ներկում ենք ջրով: Այս գրքի թղթի որակն այնպիսին է, որ կրտսեր ընթերցողը գրքին կցված գունամատիտի սրվակում մաքուր ջուր է լցնում և պարզապես խզբզում: Ջրի հետ շփումից թղթի պատկերը համապատասխան երանգներ է ստանում: Այսպես ընթերցումն ավելի գրավիչ է դառնում,-ասում է Մարիամը:

Տաղավարում ներկայացված գիրք-թատրոնից բոլոր հերոսները դուրս են գալիս.

-Տե՛ս, մամ, գրքի ետևում ոտնակներ կան, կարող եմ փակցնել հերոսներին և իմ թղթե թատրոնը բեմադրել,-ուրախանում է 9-ամյա Հենրին:

Հենրիի քրոջն էլ գրավում է «Նվագիր գույներով» ժողովածուն: Գրքին կցված խաղալիք դաշնամուրով կարող ես նվագել ժողովածուն զարդարող ցանկացած երգ՝ չիմանալով նոտաները՝ հետևելով գույներին:

«Հայկական լեռնաշխարհը» և «Ճանաչիր Երևանը» գրքերն էլ պետք է փնտրել վիրտուալ տիրույթում:

- Հայկական վիրտուալ համալսարանի ներկայացրած գրքերը թարգմանված են յոթ լեզվով և իրենց մեջ ամփոփում են աուդիո, վիդեո տարբերակով բազում նյութեր, ֆիլմեր, լուսանկարներ: Պետք պարզապես համացանցում որոնել մեր գրքերը -ասում է Մարինա Խաչատուրյանը:

30-ամյա մանկական հրատարակչությունն էլ՝ «Արևիկը», ներկայացնում է աշխարհի և հայ դասական հեքիաթագիրների ժողովածուները՝ պրակներով և ավելի մատչելի ընթերցողների համար. Թումանյանի, Աղայանի եռալեզու հեքիաթների ժողովածուները, ինչպես նաև բազում խաղագրքեր:





-Փորձել ենք այնպես անել, որ ընթերցումը երեխայի համար ուրախ և ուսանելի ժամանցի վերածվի: Օրինակ՝ «Կոշկավոր կատուն», «Ծիտը» հեքիաթները երեխան կարող է կարդալ, հետո անջատել կոշտ թերթերը զսպանակից, հավաքել խաղագորգն ու զառերով ստուգել կարդացածը թվերի տակ թաքնված հարցերով,-ասում է հրատարակչության տնօրեն Սաբեթ Հովհաննիսյանը:

«Հայաստանի մշակութային հիմնադրամը» իր հրաշալի նախաձեռնությամբ է՛լ ավելի տոնական դարձրեց Գիրք նվիրելու օրը. «Գրաբուս»-ը, որն առաջին շարժական գրախանութն է Հայաստանում, շրջեց այդ օրը քաղաքի տարբեր համայնքներում, իսկ ներկայացված բոլոր գրքերը վաճառվեցին 30 տոկոս զեղչով: